«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի գործում:

Առարկան՝ Մանսուրյան Մարիամ

Հետազոտող ուսուցիչ՝ Հայոց լեզու և Գրականություն

Ուսումնական հաստատություն՝ Խ. Սամուելյանի անվան թիվ 47 միջնակարգ դպրոց

Երևան 2023

Թեմա՝ էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի գործում:

Բովանդակություն

Ներածություն.....4

Էպոսում արծարծված հայրենասիրության տարրերի համակողմանի ներկայացում.....7

Արժեհամակարգի ձևավորման համատեքստում «Սասնա Ծռեր» էպոսի նշանակությունը.....11

Եզրակացություն.....14

Օգտագործված գրականության ցանկ.....15

Ներածություն

Կրթական գործի կազմակերպումը բոլոր ժամանակներում վստահվել է դպրոցին՝ որպես պետական քաղաքականության ազգային հիմք, հիմքում ունենալով հայրենասիրության, ազգապահպանման, կրթության և զարգացման գործոնը: Կրթական հաստատությունների, հատկապես՝ դպրոցի դերակատարությունն անժխտելի փաստ է մատաղ սերնդի կրթության- դաստիարակության հարցում: Արդի կրթությանն ուղղված մարտահրավերները թույլ են տալիս ուսումնական պրոցեսը դարձնել ավելի ակտիվ, ինչն էլ նպաստում է աշակերտի աշխարհընկալման և ճանաչողության զարգացմանը: Ուսուցման կատարելագործմանը մեծապես օգնում են մանկավարժական համապատասխան մեթոդների կիրառումը, նաև գործնական աշխատանքների ներգրավվածությունը դասապրոցեսում: Իսկ ուսումնական պրոցեսի արդյունվետության բարձրացման համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ ժամանակակից նոր հնարքներ, հմտություններ կիրառելով:

Էպոսը (դյուցազնավեպը) էպիկական ժանրի գործ է, որը ձևավորվում է տարբեր ժողովուրդների ստեղծագործական ուժերով՝ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող պատմական ժամանակաշրջաններում և ներկայացնում է ժողովրդի հավաքական մտածողությունը, ազգային բնավորությունը, կենցաղը, բարքերը:

Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրությունը՝ Էպոսը, արտացոլում է հայ ժողովրդի հավաքական մտածողությունը, հայրենասիրությունը, ազատասիրական ոգին, բարոյական ըմբռնումները, ընտանիքի պահպանումը: Որպես արժեհամակարգի ձևավորման վառ օրինակ՝ «Սասնա Ծռեր» էպոսի ուսուցման արդյունավետ կազմակերպումը նպատակային և հետևողական կիրառման համատեքստում, կբարելավի աշակերտի բարոյական, հոգևոր, գեղագիտական, մշակութային և ազգային արժեքների ձևավորումը: Էպոսի ճյուղերից յուրաքանչյուրում վառ արծարծված են հայ ժողովրդի բարոյական և ֆիզիկական հաղթանակները, հայրենասիրության և ընտանիքի պահպանման գաղափարը:

«Սասունցի Դավիթ» էպոսը մեկնաբանելիս Հ. Օրբելին ներկայացնում է այն երազանքները, որոնք հայ ժողովուրդը դրել է ազգային էպոսում: Էպոսի դյուցազունները մերժում են նվաճողական պատերազմ հրահրողներին և նրանց ողջ պայքարը հենց նման

զավթիչների դեմ է, էպոսի գլխավոր հերոսը «ջերմ ու անաղարտ սիրտ ունի», օգնում է բոլոր անպաշտպան մարդկանց ու սխրագործություններ է կատարում հանուն իր հայրենիքի ու ժողովրդի բարօրության[1]:

Դյուցազնավեպը սկզբնավորվել է Սասունում, բայց աստիճանաբար տարածվել է ամբողջ ժողովրդի մեջ և դարձել համազգային: Այն իր մեջ ներառել է անցյալի առասպելական պատումները, սկսած Հայկի և Բելի պայքարից, այսինքն հայ ժողովրդի առաջացման, բռնակալ իշխանությունների դեմ պայքարի ժամանակաշրջանից:

Էպոսը մարդկության ստեղծած ամենահանճարեղ գեղարվեստական գործերից է: Նրա մեջ ամփոփված գաղափարները արդիական են այսօր: Աշակերտները, բացահայտելով էպոսի գաղափարական բովանդակության հիմնահարցերը, կունենան ապագայի տեսլական: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել «Սասնա ծռեր» դյուցազներգության ուսուցումը ավանդական և ժամանակակից մեթոդներով, ուսումնասիրել հերոսների նկարագիրը, տալ էպոսի բնութագիրը և վեր հանել ազգային ու համամարդկային ներուժն ու գաղափարը:

«Սասնա Ծռերը» բաղկացած է չորս ճյուղերից: Սասնա դյուցազնական տոհմի նախնիներն են Սանասարն ու Բաղդասարը: Հաջորդը Մեծ Միհրն է, ապա նրա ժառանգ Դավիթը, իսկ չորրորդ ճյուղը Դավիթի որդի Փոքր Միհրն է: Չորս սերունդները գործել են Սասունում, պայքարել այլադավան բռնակալների դեմ և հաղթանակել: Էպոսը տեղեկատվական մի ամբողջ բույլ է, հիշատկված են աշխարհագրական անունների տեղագրությունը, հեթանոսական ու քրիստոնեական հավատալիքները միախառնումը, մարդկային բարձր հատկանիշներով օժտված կերպարներ:

[1] ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻՆ ԵՎ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԸ, Երևան, 2015:

ԷՊՈՍ
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

Նպատակ

Թեմայի հետազոտման նպատակն է ուսումնասիրել և վեր հանել Էպոսում, ինչպես հայրենասիրական, այնպես էլ ազգային արժեհամակարգի ձևավորման գործընթացները:

Հետազոտության խնդիրներ

1. էպոսում արծարծված հայրենասիրության տարրերի (դրսևորումների) համակողմանի ներկայացում:

2. Արժեհամակարգի ձևավորման համատեքստում «Սասնա Ծռեր» էպոսի նշանակությունը:

Հետազոտական աշխատանքի նորույթ.

փորձ է արվում Էպոսն ուսումնասիրել համակողմանի, որտեղ քննության են առնված դյուցազունների կերպարները հայրենասիրական, արժեհամակարգային այլ առանձնահատկություններով հանդերձ, որի նորովի լուսաբանումը կամրապնդի թե՛ վերլուծական և թե՛ արժեհամակարգի պրակտիկ մտահորիզոնը սովորողների շրաջանակներում:

1. Էպոսում արծարծված հայրենասիրության տարրերի համակողմանի ներկայացում

«Էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհի առջև»:

Հովհաննես Թումանյան

«**Սասնա ծռեր**» կամ «**Սասունցի Դավիթ**» դյուցազնավեպը հայ ժողովրդի հնագույն տիեզերական պատկերացումների ազատատենչության և ազատագրական պայքարի նկարագիրն է, որի չորս ճյուղերից յուրաքանչյուրում ներկայացված հերոսների մարտական ոգին. հայրենիք պաշտպանելու նվիրական ձգտումները, բարի և չարի հակամարտությունները: Ժողովրդի ապրումները, նրա ձգտումներն արտահայտող նման ստեղծագործությունները մշակվում են երկար ժամանակ, դարերի ընթացքում, բայց վերջնական ձևավորում են ստանում ժողովրդի ինքնության, ինքնագիտակցության բարձրացման որոշակի աստիճանում: Պետք է ընդգծել, որ բոլոր ժողովուրդների էպոսներն իրար հետ ունեն շատ ընդհանրություններ: Նրանցում տվյալ ժողովրդի շահերն արտահայտող հերոսները չար ուժերի դեմ պայքարում մշտապես հաղթանակ են տանում: Հերոսները ծնունդ են առնում բնության երևույթներից՝ աղբյուրի ջրից, արևի լույսից և այլն: Դյուցազուն մանուկներն աճում են ոչ թե տարիների կամ ամիսների այլ ժամերի ընթացքում: Նրանք անասելի մեծ ուժի տեր են և սխրանքներ են կատարում շատ երիտասարդ տարիքում: Մեծ ուշադրություն է դարձվում դյուցազունների զենքին ու նժույգին: Նմանօրինակ երևույթները բազմազան են, որոնք առանձին ուսումնասիրման և հետազոտման նյութ են:

Հայրենասիրության ոգին վառ է արտացոլվել մեծ բանահավաք, նվիրյալ և հայրենասեր Գարեգին Սրվանձտյանի[2] «Գրոց և Բրոց» և «Սասունցի Դավիթ» կամ «Միերի Դուռ» աշխատության առաջին էջերում: Հայրենասիրական ոգով տոգորված՝

[2] «Սասնա ծռերը» հայտնաբերել և ամբողջությամբ գրառել է Գարեգին Սրվանձտյանը 1873 թվականին, Երկրորդ տարբերակը՝ գրի է առել Մանուկ Աբեղյանը: Նորանոր տարբերակներ են գրառել Գ. Հովսեփյանը, Խ. Դաղյանը, Ս. Հայկունին, Ա.Աբեղյանը, Ե.Լալայանը, Կ. Մելիք–Օհանջանյանը, Ա. Ղանալանյանը և Հ. Թումանյանը ուրիշներ: Մանրամասը տես Հ. Համբարձումյան, Սասնա ծռեր. պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Երևան 2018:

Ծովինարը համաձայնում է Խալիֆայի առաջարկին՝ դառնալու կինը, այդպիսով փրկելու իր հայրենիքը.

Յես մենակ մեռնիմ իմ հոր թերեն.
Յես մենակ ջան եմ, երթամ, կորսը վիմ,
Քանց մեր Հայաստան երկիր ավերի,
Են հազար հազար հոգիք կորուսանին:
Դարձավ ասաց.– Հայրիկ, ինձ տուր ենոր»[3]:

Ծովինարը, լսելով այդ նորությունը, համաձայնում է դառնալ կռապաշտ խալիֆի կինը, որպեսզի հայրենիքը փրկի ավերումից ու վտանգից: Մի անգամ Ծովինարը Հայոց լեռներում շրջելիս խմում է այդ նվիրական ջրից, հղիանում է և ունենում է երկու տղա: Մեծի անունը դնում է՝ Սանասար, իսկ փոքրինը՝ Բաղդասար: Տղաները մեծանում են, զորեղանում և գալիս Սասնա տունը շենացնելու: Սանասարն ու Բաղդասարը, հիմնադրելով Սասնա բերդը, ապահովում են ժողովրդի անվտանգությունը: Նրանք, ինչպես նաև նրանց հետևորդները, իրենց ողջ ներուժը օգտագործում են շենացնելու հայրենի հողը, ապահովում ժողովրդի բարօրությանն ու ազատ կյանքը: Էպոսի գաղափարախոսությունը բոլոր ժամանակների համար էլ եղել և կլինի արդիական, որովհետև հիմքում ընկած է՝ սիրել հայրենիքը, լինել աշխատասեր ու մարդասեր, պահպանել հայ ընտանիքի ավանդույթները, չենթարկվել բռնակալ ուժին, ունենալ ամուր հայրենիք և ամենակարևորը՝ պաշտպանել հայրենիքը ագրեսոր թշնամիներից:

Էպոսի գաղափարական գծերից է հայրենասիրությանը զուգահեռ ազատասիրության մաքառումը: Այնտեղ ազատությունը ներկայացվում է որպես բնական իրավունք: Հերոսները, պաշտպանելով իրենց ազատությունը, ուրիշներին չեն զրկում այդ իրավունքից: Սասունում բոլորը հավասար են և ազատ: Նրանք ազատ էին ու վեր մարդկանց ստեղծած արհեստական օրենքներից: Աշակերտների կարող են համամեմատական անցկացնել և կարծիքներ փոխանակել ազատության մասին այսօրվա պատկերացումների շուրջ:

Սանասարի որդին՝ Մեծ Միհրը, որը էպոսի երկրորդ ճյուղում է ներկայացված, տասնհինգ տարեկան հասակում ազատում է Սասունը մարդակեր առյուծից՝ երկու մասի բաժանելով նրան, որից հետո նրան սասունցիները տվել են Առյուծաձև Միհր կամ Առյուծ

[3] «Սասունցի Դավիթ», 1939, էջ 10:

Միեր պատվանունը: Միերն ամուսնանում է Արմաղանի հետ, ում նա փրկում է և ազատում գերության մեջ պահած Սպիտակ Դևից: Մեծ Միերը, խոստումը չդրժելով, Մըսրա Մելիքի մահից հետո գնում է Մըսր և տեր կանգնում Մըսրա տանը և Իսմիլին: Իսմիլը խորամանկորեն Միերից որդի է ունենում: Երդումը դրժելու համար Միերին և Արմաղանին Աստված պատժում է, և երբ նրանք որդի են ունենում, նույն մահանում են:

Սասնա դյուցազունները, իրենց մարդկային բնավորության անհատական գծերով հանդերձ, միաժամանակ ստեղծագործող ժողովրդի լավագույն ձգտումների, ցանկությունների և երազանքների մարմնավորումն են և բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ: Էպոսում կնոջ դերը, ծնողի հեղինակությունն ու հարգանքը ուսուցողական–դաստիարակչական մոդելի վաղ օրինակներ են, որոնց հանդիպում ենք էպոսի առաջին իսկ էջերից սկսած: Արմաղանն օգնում էր ամուսնուն ղեկավարել երկիրը: Նա գնաց անձնազոհության ներեց դավաճան ամուսնուն, որն արդեն երկար տարիներ գտնվում էր օտար երկրում՝ հանուն դյուցազնական տոհմի շարունակության:

Գ. Սրվանձտյանցին հետաքրքրում են Սասունցի Դավթի՝ ազգային սիրված հերոսի բնավորության հիմնական գծերը՝ քաջություն, հայրենասիրություն, նվիրում իր ժողովրդին, վեհանձնություն և մեծահոգություն: Դավիթը գերմարդկային ուժ ունեցող անխոցելի հսկա է՝ հայրենասեր, ժողովրդասեր, ռամիկի ու աշխատավորների պաշտպան. նա անձնուրաց է ու քաջ, մարդասեր, խաղաղասեր: Հազարամյակների ընթացքում ժողովուրդն է սերնդից սերունդ մշակել Դավթի կերպարը, նրա մեջ դրել իր լավագույն զգացումները, ձգտումները, իղձերն ու նպատակները. Դավիթը քանդում է հոր որսատեղի պարիսպները և ազատում որսի կենդանիներին: Դավիթն արտասովոր մանուկ է. մեծանում է ոչ թե օրերով, այլ ժամերով, արտակարգ ուժի տեր է: Դավիթն անսահման սիրում է իր հայրենի եզերքը, հարազատներին, հասարակ ժողովրդին և շարունակ օգնում է նրանց: Նա բարի է ու աստվածավախ: Դավիթը Մսրա Մելիքի զորքի վրա հարձակվելիս զգուշացնում է, որ նրանք պատրաստվեն կռվի: Կռվելով Մըսրա Մելիքի հսկայական զորքի դեմ, սրի մեկ հարվածով սպանում է նրան և Սասունն ազատում է հարկերից և արաբների իշխանությունից: Նա ունենում է որդի՝ Փոքր Միերը: Վերջինիս կերպարում ամփոփված են մեր ժողովրդի ենթագիտակցական և անգիտակցական մղումների խորախորհուրդները: Ա. Իսահակյանի բնութագրմամբ «Էպիկական Միերը դիալեկտիկ հակասությունների մի կոմպլեքս է. նա բարի է, նա չար է, վերջնական սինթեզի մեջ բարի

է»[4]: Ե՛վ Դավիթը, և՛ Միերը ջանք չենք խնայել հայրենի հողի պաշտպանության համար՝ վտանգելով իրենց կյանքը և զրկանքներ կրելով:

Փոքր Միերը, դառնում է հորից հետո «Ձոջանց տան» տերն ու ապավենը: Նա սպանում է Չմշկիկ Սուլթանին և լուծում իր հոր վրեժը: Ապա ամուսնանում է գեղեցկուհի Գոհարի հետ: Բայց կատարվում է հոր անեծքը. Միերը մնում է անժառանգ: Հողն այլևս չի դիմանում Միերի ոտքերի տակ: Սասնա վերջին քաջազունը փակվում է Ագռավաքար ժայռի մեջ: Երկար թափառում էր Սասնա սարերում իր հավատարիմ ընկերոջ՝ հրեղեն Քուռկիկ Ձալալու հետ: Ողբում էր, ուժերը օրեցօր պակասում էին, իսկ ժողովրդի դժբախտությունները՝ սաստկանում: Եվ ահա մի երեկո Միերը կանգ է առնում սև Ագռավաքարի առաջ: Կենտրոնացնելով վերջին ուժերը՝ հուժկու հարված հասցնում ժայռին՝ ճեղքելով Ագռավաքարը: Ժպտաց Միերը արևի լույսին, թոթափեց ձիու բաշը և մտավ ներս՝ ժայռը ամիջապես փակվեց նրա հետևից ու ընդմիշտ քարացավ: Նրան կարողանում է տեսնել մի հովիվ. հզոր դյուցազնը՝ Միերը՝ վիթխարի ձիու վրա: Նա չէր հանդուրժում տիրող անարդարությունները և սուտը.

- Քանի աշխարհում սուտն է թագավորում, ես չեմ կարողանա այստեղից դուրս գալ: Երբ որ երկիրը կքանդվի և նորից կարարվի, գարու հատիկը կլինի պոպոքի չափ, իսկ ցորենի հատիկը՝ մասուրի չափ, ես թույլտվություն կստանամ դուրս գալու ժայռի միջից[5]:

Էպոսում բանասացը յուրաքանչյուր հերոսին անվանում է Սասնա ծուռ, այսինքն՝ ուղղամիտ, կամակոր, խենթի նման հանդուգն և հայրենասեր կտրիճ:

Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչությունից, իսկ վերջինս օրինապահ, ազգապահպան, հայրենապաշտպան քաղաքացու դաստիարակության կարևորագույն միջոցներից է:

---

[4] Իսահակյան 1977. 157:
[5] Ա. Իսահակյան Սասմա Միեր:

2. Արժեհամակարգի ձևավորման համատեքստում «Սասնա Ծռեր» էպոսի նշանակությունը:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը:

Թեմայի ուսումնասիրման արդյունքում աշակերտը հաղորդակցվում է իր ժողովրդի ակունքներին, քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքին, պատմամշակութային ժառանգությանը, որն էլ ձևավորվում է նրա ազգային նկարագիրը, ինքնագիտակցությունը, աշխարհայացքը, արժեհամակարգը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը Արժեքային համակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային, էթնիկական արժեքների ընդհանրությունն է, որն անհրաժեշտ է անձի կամ աշակերտի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող գործոններից են ուսումնական առարկաները, որոնց հետ համադրվում է տեղեկատվական դաշտը: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Հանրակրթական ծրագրում ներառված են առարկաներ, որոնցից յուրաքանչյուրը իր նպաստն է բերում գիտելիքի ձեռքբերման և որպես անհատ զարգացման-կայացման գործում: Այդ առարկաների շարքում է հայոց լեզվի և գրականության առարկաների դերակատարությունը: Չ՞է որ ավելի քան 5 հազարամյա պետականություն ունեցող Հայաստանը պետք է ներկայացնել մատաղ սերունդներին, աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն, սեփական երկրի մշակութային արժեքների պահպանում:

«Սասունցի Դավիթ» էպոսը վերոհիշյալի վառ օրինակն է, որտեղ արտահայտված գաղափարները բացառիկ արժեքներ են: Հերոսները ոչ միայն հայրենասեր և ժողովրդի նվիրյալ զավակներ են, այլ նաև ազնիվ և արդար մարդիկ: Մասնավորապես՝ Սասունցի Դավթի հերոսական արարքներն ունեն տիպիկ ազգային բովանդակություն, քանի որ

արտացոլում են հայ ժողովրդի ինքնապաշտպանական մաքառումը՝ ուղղված օտար հարստահարիչների, բռնակալների դեմ, մանավանդ՝ արաբական տիրապետության շրջանում: Ժողովուրդը Դավթին դարձրել է միասնական ձգտումների, հայրենիքի ազատության ու փրկության կրողն ու արտահայտիչը: Այս ամենին զուգահեռ հանդիպում ենք Դավթի պայքարում վրեժխնդիր չլինելը: Մսրա Մելիքի սպանությունից հետո Դավիթը նրա զորքին որևէ պահանջ չի առաջադրում, ոչ էլ հալածում է, այլ խաղաղ կյանքով ապրելու հորդոր է անում:

Էպոսում արտացոլվել են բարոյական արժեհամակարգի անկյունաքարային գաղափարները, արծարծվել մարդասիրական բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրությունն այսօր էլ արդիական է: Ազգային ինքնության գծերը, որոնց բացահայտումը կարող է հնարավորություններ ընձեռնել մերօրյա իրականության բազմաթիվ խնդիրների հաղթահարման համար: Օրինակ Դավիթը հայրենիքի սահմանները ամուր պահելու իր տեսլականը ունի «..թե որևէ այլ երկիր իրավունք չունի խառնվելու իր հայրենիքի գործերին ն. ամեն երկրի գահակալ թող զբաղվի միայն իր երկրի գործերով[6]»: Իսկ երբ կռվի էր դուրս գալիս թշնամու բանակների դեմ, զգուշացնում էր՝

Ով քընած է՝ արթուն կացեք,

Ով արթուն է՝ ձիեր թամբե՛ք,

Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,

Ով կապեր է՝ էլե՛ք, հեծե՛ք.

Չ՛ասեք Դավիթ գող-գող էկավ,

Գող-գող գընաց[7] :

Այս տողերում կարելի տեսնել թշնամու դեմ արժանապատիվ պայքար: Դյուցազնավեպի մյուս հերոսներն էլ զերծ չեն մնում իրենց մեծահոգությամբ, օրինակ Մեծ Միհրը, տեսնելով առյուծին, զենքերը մի կողմ է դնում և կռվում ձեռքով՝ նրան էլ է մեր բերել, իրեն էլ: Այս հերոսները պաշտպան են անզորին, թույլին, մտածում են իրենց երկրի ու ժողովրդի բարօրության մասին:

Էպոսում հերոսների վարքը հումանիզմի և հանդուրժողականության բաձրագույն դրսևորում է: Նրանք ուժեղ են, որովհետև բարոյական են: Շրջապատված լինելով

[6] Մանրամասը տես Սասունցի Դավիթ, էջ 210:
[7] Սասունցի Դավիթ, 1981, 230:

ռազմատենչ և իշխանատենչ ցեղերով՝ պատրաստ են պաշտպանելու իրենց ազգային արժանապատվությունը:

Ուսուցողական են նաև «Սասնա ծռեր» էպոսում տեղ գտած, հայ ժողովրդին բնորոշ ապրելակերպի, ընտանիքի, ներընտանեկան և հասարակության մեջ փոխհարաբերությունների, կրոնական ընկալումների, ծիսական արարողությունների, հավատալիքների մասին տեղեկությունները: Վեպում հիշատակվում են թագավոր, իշխան, հոգևորական և ռամիկ ժողովուրդ:

Էպոսում արժեվորվում է նաև բարիքներ ստեղծող արդար աշխատանքը: Աշխատանքն, որպես կյանքի կենսունակության աղբյուր, առկա է դյուցազնավեպի բոլոր ճյուղերում՝ Սանասարի և Բաղդասարի կողմից Սասնա բերդի կառուցումը, Դավիթի կողմից հոր կառուցած Մարութա վանքի վերականգնումը, Փոքր Միհրի կամրջաշինությունը: Արդար աշխատանքով, սեփական քրտինքով հաց վաստակելը ներկայանում է որպես սկզբունք, որպես միակ ընդունելի միջոց: Շարունակելով արժեհամակարգային հատկանիշներ ուսցանող երևույթները կարևորենք ընտանիքի դերակատարությունը, ընտանիքի մեծի նկատմամբ հարգանքը, նրան ենթարկվելը, խորհրդատու դառնալը, փորձով իմաստնացած մեծահասակ մարդկանց խորհուրդներին լսելը: Դավիթը քանիցս ականջալուր է լինում կորեկի արտի տեր պառավ հայ կնոջ խորհուրդներին և մշտապես հաջողության է հասնում: Նա, երբ անխնա կոտորում էր Մսրա Մելիքի զորքին, յոթ տղաների հետ կռվի դաշտ բերված գլխաբաց արաբ ծերունին խնդրանքով դիմում է Դավթին և դադարեցնել տալի մարտը[8]:

«Սասունցի Դավիթ» Էպոսը հայ ժողովրդի դարավոր ազատագրական պայքարի գեղարվեստական ընդհանրացումն է: Որքան այդ պայքարը եղել է շարունակական, հայկական պատմավեպն էլ մշտապես նորացվել, համալրվել է և մնացել թարմ ու կենդանի:

Կարելի է փաստել, որ «Սասնա ծռեր» էպոսը մի ամբողջ համակարգ է, որը կրում է ազգային ու համամարդկային մեծագույն արժեքներ՝ հայրենասիրություն, ազատասիրություն, արդարամտություն, արժանապատվություն, մարդասիրություն, նաև կրթում, դաստիարակում է մի ամբողջ ժողովրդի:

Էպոսը՝ որպես արժեքային համակարգի ձևավորման հիմք դպրոցում ուսուցանվում է գաղափարական գծերի վերհանման ճանապարհով՝ հայրենասիրություն,

[8] Տե՛ս մամրամասը Սասունցի Դավիթ, 1981, 231–232:

ազատասիրություն, ազգային մտածողություն, պետականության նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Այս գաղափարական արժեքների վերհանումն աշակերտների շրջանում ձևավորվում են արժեքային համակարգի կարևոր բաղկացուցիչները՝ ազգանվեր, հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց նվիրվածություն, սեփական գոյության իրավունքի համար հարատև պայքար՝ պահպանելով ազգային արժեքները:

Եզրակացություն

Հայ իրականության մեջ ժողովրդական էպոսը ծնունդ առավ զարգացած միջնադարի շեմին՝ ժողովրդի քաղաքական ակտիվության, լուսավորական շարժման վերելքի պայմաններում: Էպոսի հերոսների կյանքը, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրություններն ու տարբերությունները վեր հանելով կկարողանանք փծավորել արժեհամակարգ չհեռանալով պատմական ակունքներից: Այս առումով՝ բանահյուսական նյութերի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս դպրոցականներին հաղորդակից դարձնել ժողովրդի կյանքին, ծանոթանալ նրա մտածելակերպի, սովորույթների հետ, դրանք ընդօրինակելով, սերտելով նախահայրերի անցած բարոյական ուղին: Հայրենիքի և հայրենասիրության մոդելի սերմանումը յուրաքանչյուրիս պարտքն է, անկախ մասնագիտական ոլորտներից: Կրթական համակարգում տեղի ունեցող դրական տեղաշարժերը, ինֆորմացիայի բազմազանությունը և նյութի հասանելիությունը համակողմանի հնարավորություն են ընձեռում դաստիարակել բանիմաց սերունդ:

Կարելի է փաստել, որ սովորողի արժեհամակարգի ձևավորմանը բացառիկ հնարավորություն է ընձեռում «Սասնա ծռեր» դյուցազնավեպը: Այն հատկանիշները, որոնք ներկայացրեցինք փոքր մասն են կազմում: «Սասնա ծռեր»-ը նման է անտակ ծովի. երբեք չես կարող հասնել խորքերին:

Մեր կողմից փորձ արվեց հայրենասիրություն, մարդասիրություն ազատատենչություն, պահպանելով շարունակել արժեհամակարգ ձևավորել: Աշակերտները ուսումնասիրելով էպոսը, կարող է համեմատական քննություն անցկացնել, իրենց և էպոսի հերոսների արժեհամակարգների միջև, հասկանալու թե՞ էպոսի որ հերոսների արժեհամակարգի կրողներն են: Ինչ խոսք, համակողմանի ուսումնասիրությունը կնպաստի ինքնաճանաչողության և ազգային արժեքների վեր հանմանը և պահպանմանը:

Օգտագործված գրականության ցանկ

Գ. Սրվանձտյանց, Գրոց ու Բրոց, 1874
«Սասունցի Դավիթ», 1939թ., 1961թ.
Իսահակյան 1977. 157:
ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻՆ ԵՎ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» հայ ժողովրդական էպոսը, Երևան, 2015:
Հ. Համբարձումյան, Սասնա ծռեր. պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Երևան 2018:
Ղարիբյան Ա.Սասունցի Դավթի բարոյական նկարագիրը հայոց ինքնության պահպանման համատեքստում, Հայոց ինքնության հարցր, 2, 2014:
Գայանե Մարդյան «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» էպոսի ուսուցման մի քանի խնդիրներ, Երևան, 2015: